



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

07.06.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 61/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 20.05.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-61/16 բողոք) և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և ԳԲԽ-61/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 03.06.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 20.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

1. Հանգամանքները, որոնց վրա հիմնվում են բողոքաբերի պահանջները.

Բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները.

1) «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի 2015թ. հոկտեմբերի 6-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

2) «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (Կենտրոնի) միջև 28.04.2015թ. կնքվել է համաձայնագիր այն մասին, որ Կատարողը (տվյալ դեպքում Ընկերությունը) մասնակցել է Կենտրոնի կողմից լվացքի և մաքրման ծառայությունների ձեռքբերման N ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21 ծածկագրով կազմակերպված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և գրանցվել որպես հնարավոր մասնակից:

Նշված համաձայնագրի 1.4 կետով սահմանվել է, որ Կատարողը պարտավոր է Կենտրոնի կողմից, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում, համապատասխան ծանուցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս «Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մ/ճ N 163058100971 հ/հ-ին վճարել հայտի ապահովման չափով գումար:

3) Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ճանաչվել է հաղթող, սակայն, ՀՀ պաշտպանության նախարարության «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի 04.11.2015թ. N 5 արձանագրային որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

4) Ընկերությունը 2016թ. մարտին ստացել է ՀՀ կառավարության աշխատակազմի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 23.03.2016թ. գրությունը, որով «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ն տեղեկացվել է այն մասին, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.12.2015թ. թիվ ԴՎԱ/2928 գրության հիման վրա դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը նշված ցուցակում ներառելու համար:

5) ՀՀ կառավարության աշխատակազմի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 02.03.2016թ. թիվ 01/04.1/759-16 գրությանը կից Ընկերությանը ներկայացվել է «Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տալու վերաբերյալ» եզրակացությունը (այսուհետ՝ նաև **Եզրակացություն**): Եզրակացության մեջ նշվել է, որ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) շրջանակներում տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակցից հրավերով պահանջվել է ներկայացնել արտադրամասի (տիպը՝ արդադրական նշանակության, մակերեսը՝ ոչ պակաս 100մ²) նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները, մինչդեռ Ընկերության կողմից ներկայացվել է տարածքի վարձակալության պայմանագիր՝ առանց պետական գրանցման: Եզրակացության մեջ նշվել է, որ Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը չի կարող դիտվել որպես Հրավերով պահանջվող պահասենյակների նկատմամբ Ընկերության սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ:

Նման պայմաններում՝ Ընկերության հայտի N 3.2 հավելվածը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում կեղծ տվյալի ներկայացում:

6) Ընկերությունը 31.03.2016թ. դիմում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարությանը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին Ընկերության մասնկացության վերաբերյալ բոլոր վերաբերելի փաստաթղթերի պատճենները, քանի որ Ընկերությունը չէր տիրապետում նաև ՀՀ պաշտպանության նախարարության «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի 04.11.2015թ. N 5 արձանագրությանը:

7) ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանը 13.04.2016թ. թիվ ԴՎԱ/949 պատասխան գրությամբ Ընկերությանն է տրամադրել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգում Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի արձանագրությունների պատճենները:

8) «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը մինչև օրս նշված գրությանը չի պատասխանել:

9) ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրամադրված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի 04.11.2015թ. N 5 արձանագրության 1.1 կետում նշվել է. «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված փաստաթղթերը, որը սակայն թերի է: Մասնավորապես, ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության վկայական 94.1 մ² մակերեսով, սակայն հրավերով պահանջվում էր ոչ պակաս 100 մ²: Բացի այդ, ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքված 2015թ. հոկտեմբերի 30-ին, մինչդեռ «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել էր հոկտեմբերի 14-ին, որի Հավելված 3.2-ով ներկայացրել է հայտարարություն, որ կազմակերպությունը ունի հրավերով նախատեսված տեխնիկական միջոցները և պարտավորվում է 1-ին տեղ զբաղեցնելու դեպքում ներկայացնել փաստաթղթեր, որոնց հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ի հայտը: «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելուց հետո «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ն:

10) 30.10.2015թ. ՀՀ քաղաքացի Անդրանիկ Համբարյանի, Կարինե Իսկոյանի և «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ի՝ ի դեմս լիազորված անձ Պատվական Պետրոսյանի միջև կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որի 3.1 կետով սահմանվել է, որ պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը, այն է՝ ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ համայնքում, Նորքի 10 փողոց, թիվ 11 տուն հասցեում գտնվող 146,4 քմ ներքին մակերեսով և 154,3 քմ արտաքին մակերեսով անշարժ գույքը (այսուհետ՝ նաև **Անշարժ գույք**) Վարձատուն հանձնում է Վարձակալին 01.10.2015թ. և Կողմերը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածը, սահմանում են, որ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի կնքելը Կողմերի միջև 01.10.2015թ. փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

11) ՀՀ կառավարության աշխատակազմի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ Մ. Անանյանը Ընկերության տնօրենին ուղղված 23.03.2016թ. 01/04.1/1124-16 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավոր է վճարել տուժանք՝ հայտի ապահովման չափով գումար (1.000.000 ՀՀ դրամ):

2. Բողոքաբերի պահանջի իրավական հիմքերը և հիմնավորումները.

Սույն գործի փաստերից պարզ է դառնում, որ Ընկերությունը մասնակցել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

ՀՀ պաշտպանության նախարարության «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի 04.11.2015թ. N 5 արձանագրությանից պարզ է դառնում, որ Ընկերության հայտը մերժվել է հետևյալ պատճառներով՝

1) Ընկերության կողմից չի ներկայացվել հրավերով պահանջվող արտադրամասի (տիպը՝ արդադրական նշանակության, մակերեսը՝ ոչ պակաս 100մ²) նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթուղթ:

2) Ընկերության կողմից ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ կնքված 2015թ. հոկտեմբերի 30-ին, մինչդեռ «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել էր հոկտեմբերի 14-ին:

Առաջին հանգամանքի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Ընկերության կողմից որպես հրավերով պահանջվող արտադրամաս ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության վկայական 94.1 մ² մակերեսով և 30.10.2015թ. կնքված 146,4 քմ ներքին մակերեսով և 154,3 քմ արտաքին մակերեսով տարածքի նկատմամբ վարձակալության պայմանագիր՝ վավերացված նոտարի կողմից, որից հետո իրավունքը կստանար պետական գրանցում:

Գտնում ենք, որ միայն պետական գրանցման բացակայությունը չի կարող դիտվել որպես նշված անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի բացակայություն:

Հետևաբար, գտնում ենք, որ տվյալ դեպքում, կարևորվում է նաև այն հարցադրումը, թե զուտ գույքային իրավունքի պետական գրանցման ենթարկած չլինելը, արդյոք բոլոր դեպքերում պետք է խոչընդոտ հանդիսանա այդ իրավունքի ծագումն արձանագրելու համար:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սեփականության իրավունքի պետական գրանցման բացակայության և այդ պայմաններում սեփականության իրավունքի առկայության խնդրին, իր **2009 թվականի մարտի 13-ի** **ԵԱԲԴ/1522/02/08 որոշմամբ** մասնավորապես նշել է. «Սույն գործով Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ Երևանի Սարկավազի փողոցի 147/1 շենքի թիվ 12 բնակարանի նկատմամբ Ավետիս Սորսումատյանի սեփականության իրավունքը գրանցված լինելու վերաբերյալ ապացույցներ չեն ներկայացվել, եզրահանգել է, որ Դատարանի 19.08.2008 թվականի վճիռը Ավետիս Սորսումատյանի իրավունքների ծավալի վրա չի ազդում:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դատական պաշտպանության ենթակա իրավունքների ծավալը ավելի լայն է, քան միայն պետական գրանցման ենթարկված իրավունքներն են: Այսպես, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք ... Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ «պահանջը» Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածի իմաստով կարող է հասկացվել որպես «սեփականություն» այն դեպքում, եթե բավարար չափով

հաստատված է, որ այն կարող է իրավաբանորեն իրականացվել (տես Ռուսաստանի գործով 02.05.2002 թվականին կայացված որոշման 40-րդ կետը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բողոքարկվող դատական ակտը կայացվելու պահին բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու Ավետիս Սորսումատյանի «պահանջի» իրավունքը հաստատված էր և կարող էր իրավաբանորեն իրականացվել, հետևաբար, նաև ենթակա է դատական պաշտպանության ...»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշման վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ **գույքային իրավունքների՝ ներառյալ սեփականության իրավունքի, պետական գրանցման բացակայությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ անձի մոտ սեփականության իրավունքի առկայությունն արձանագրելու համար, եթե կողմը ձեռք է բերել այնպիսի գույքային պահանջ, որի իրականացումն իրավաբանորեն հնարավոր է:** Քննարկվող պարագայում, գործի փաստական հանգամանքներից ակնհայտ է դառնում, որ Ընկերությունը ձեռք է բերել պահանջվող տարածքի նկատմամբ օգտագործման իրավունք, այն է՝ կնքել է վարձակալության պայմանագիր և նոտարական վավերացման ենթարկել այն: Ավելին, Պայմանագրի կողմերը ըստ էության կատարել են գործարքով իրենց վերապահված գործողությունները: Այն է՝ Վարձատուն Վարձակալի ժամանակավոր օգտագործմանն է հանձնել ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ համայնքում, Նորքի 10 փողոց, թիվ 11 տուն հասցեում գտնվող անշարժ գույքը: Հետևաբար, գտնում ենք, որ նման պայմաններում, որքանով որ Վարձատուի կողմից կատարվել են ինչպես գույքի հանձնման, այնպես էլ՝ Վարձակալի կողմից դրա փաստացի տիրապետմանն ուղղված գործողությունները, Վարձակալի մոտ այդ փաստական կազմի ուժով ծագել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 563-րդ հոդվածի առաջին կետով նախատեսված պահանջի իրավունքը: Այն է՝ պահանջելու Վարձատուից պետական գրանցման ենթարկելու իր սեփականության իրավունքի փոխանցումը Վարձակալին:

Նշված պահանջը.

1. երաշխավորված է վերը ներկայացված իրավանորմով /օրենքով/,
2. օրենքի ուժով երաշխավորված լինելու պարագայում այն կրում է անվիճելի բնույթ,

3. վերոգրյալ փաստական կազմի պայմաններում առկա է եղել այդ պահանջի իրավաբանորեն իրականացման հնարավորություն:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 2013 թվականի մայիսի 13-ի թիվ 132 որոշմամբ անդրադառնալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» երոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին կետի պարզաբանմանը՝ մասնավորապես նշել, որ՝ «Դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է բարձրացված հարցին և արձանագրել, որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի թիվ 3-1260(ՎԴ) քաղաքացիական գործով դեռևս 2006 թվականի հունիսի 30-ին կայացրած որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների («Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի», 07.05.2002թ., «Բեյլերն ընդդեմ Իտալիայի», 05.01.2000թ.) համաձայն՝ «սեփականություն» հասկացությունը բովանդակում է ոչ միայն ֆիզիկական բարիքների սեփականությունը, այլև սեփականություն կարող են համարվել որոշ գույքային այլ իրավունքներ և շահեր, ինչպես նաև անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը»:

Վերոգրյալ իրավական վերլուծությունը հիմք ընդունելով՝ կարելի է գալ այն եզրակացության, որ Ընկերության կողմից 01.10.2015թ.-ից՝ գույքի փաստացի հանձնման պահից, ժամանակավոր օգտագործման իրավունքի պետական գրանցման առկայությունից անկախ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 506-րդ և 563-րդ հոդվածների առաջին կետերի ուժով ծագել են անվիճելի, օրենքով երաշխավորված ու կատարման ենթակա պահանջի և այդ իսկ հիմքով վիճելի գույքի նկատմամբ ժամանակավոր օգտագործման իրավունք:

Հետևաբար, գտնում ենք, որ 30.10.2015թ. կնքված պայմանագրի ուժով Ընկերության մոտ առաջացել է նշված տարածքի նկատմամբ ժամանակավոր օգտագործման իրավունք: Ընդ որում, Ընկերության հայտը մերժվել է 04.11.2015թ., այսինքն՝ Ընկերությունը բավարար ժամանակ չի ունեցել պայմանագրի հիման վրա ժագող իրավունքի պետական գրանցումն իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարության այն փաստարկին, Ընկերության կողմից ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքված 2015թ. հոկտեմբերի 30-ին, մինչդեռ «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել էր հոկտեմբերի 14-ին և նշված անշարժ գույքի նկատմամբ որևէ իրավունք ունենալ չէր կարող, ապա նշված փաստարկը ևս համարում ենք անհիմն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

« 1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

2. Կողմերն իրավունք ունեն սահմանելու, որ իրենց կնքած պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիր կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ»:

30.10.2015թ. ՀՀ քաղաքացի Անդրանիկ Համբարյանի, Կարինե Իսկոյանի և «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ի՝ ի դեմս լիազորված անձ Պատվական Պետրոսյանի միջև կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որի 3.1 կետով սահմանվել է, որ պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը Վարձատուն հանձնում է Վարձակալին 01.10.2015թ. և Կողմերը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածը, սահմանում են, որ **սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի կնքելը Կողմերի միջև 01.10.2015թ. փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:**

Նշվածից պարզ է դառնում, որ Ընկերությունը Անշարժ գույքի նկատմամբ ձեռք է բերել ժամանակավոր օգտագործման իրավունք դեռևս 01.10.2015թ., այսինքն՝ հայտը ներկայացնելու (14.10.2015թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամանակավոր օգտագործման իրավունք Անշարժ գույքի նկատմամբ:

Բացի վերը նշածից, հարկ ենք համարում նաև ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ «Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տալու վերաբերյալ» եզրակացության մեջ նշվել է, որ Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը չի կարող դիտվել որպես Հրավերով պահանջվող պահասենյակների նկատմամբ Ընկերության սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ

և նման պայմաններում՝ Ընկերության հայտի N 3.2 հավելվածը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում **կեղծ տվյալի ներկայացում**:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն.

«1. Բացառությամբ սույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) (...)

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝

ա. ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի չի սահմանում կեղծ տվյալի հասկացությունը: Նշվածի հետ կապված կարևոր է դառնում այն հարցադրման պատասխանը, թե ինչպես պետք է մեկնաբանվի «կեղծ տվյալ ներկայացնել» իրավական հասկացությունը և արդյոք Ընկերության կողմից պայմանագիրը առանց պետական գրանցման ներկայացնելը կարող է դիտվել կեղծ տվյալների ներկայացում:

Է. Բ. Աղայանի <<Արդի հայերենի բացատրական բառարանում ուղղակիորեն բացատրվում է **կեղծ տվյալ արտահայտությունը**, որը նշանակում է որոշ դիտավորությամբ որպես իրական, իսկական ներկայացվող՝ մոլորության մեջ գցելու համար, իրականության՝ ճշմարտության չհամապատասխանող, սխալ, թյուր:

«Կեղծ տվյալ ներկայացնել» իրավական կարգավորմանը բացի «Գնումների մասին» ՀՀ օրենքից կարելի է հանդիպել նաև այլ իրավական ակտերում:

Այսպես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝

«Հարկվող օբյեկտը թաքցնելը կամ պակաս ցույց տալը՝ հարկային մարմին ներկայացված տվյալ հարկադրեականի հաշվարկներում (հայտարարագրերում) հարկվող օբյեկտը ցույց չտալը, պակաս ցույց տալը կամ էլ գործունեություն չիրականացնելու (հարկվող օբյեկտներ չառաջանալու) մասին **կեղծ տվյալներ ներկայացնելն է**»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169¹ հոդվածի համաձայն՝

«Հաշվապահական հաշվառում չվարելը կամ նախատեսված դեպքերում այլ հաշվառում չվարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի կամ հաշվարկի կամ հաշվապահական հաշվետվության կամ հարկման կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարման հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ **այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը**, որոնք կարող են առաջացնել (առաջացրել են) հարկի կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարման նվազեցում»:

«Բանկերի եվ բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետի համաձայն՝

«Կենտրոնական բանկը մերժում է դիմումը՝ 10-օրյա ժամկետում ծանուցելով դիմողին, եթե՝ փաստաթղթերը ներկայացվել են Կենտրոնական բանկի սահմանած ձևի և կարգի խախտումներով, կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են **կեղծ կամ անարժանահավասար տեղեկություններ**»:

«Վարչարարության հիմունքների եվ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին **կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար**»:

Վերը նշվածը թույլ է տալիս գալու այն եզրահանգման, որ կեղծ տվյալ ներկայացնելը պետք է դիտարկել այն դեպքերը, երբ տնտեսվարող սուբյեկտը ներկայացնում է այնպիսի տվյալներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը և դրանք ներկայացնողը դիտավորությամբ փորձում է ներկայացնել դրանք որպես իրական: Օրինակ, քննարկվող պարագայում կեղծ տվյալների ներկայացում կարող էր դիտվել այն դեպքը, երբ ներկայացվել անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ վավերացված մի անձի

կողմից, ով նոտար չի հանդիսանում, կամ կնքված պայմանագրում գույք հանձնողի (վարձատուի) դերում հանդես գար այն անձը, ով հանձնվող գույքի սեփականատերը չէ:

Հետևաբար, գտնում ենք, որ Ընկերության կողմից կեղծ տվյալներ չեն ներկայացվել, և ընդհանրապես բացակայում են հիմքերը Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցանկում ներառելու համար:

Բացի այդ, գտնում ենք, որ Ընկերությունը չունի պարտավորություն վճարելու նաև «Գարանտիա-ՇԵՆ» ՍՊԸ-ի և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (Կենտրոնի) միջև 28.04.2015թ. կնքված համաձայնագիր 1.4 կետով սահմանված տուժանքի գումարը:

ՀՀ կառավարության աշխատակազմի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ Մ. Անանյանը Ընկերության տնօրենին ուղղված 23.03.2016թ. 01/04.1/1124-16 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավոր է վճարել տուժանք՝ հայտի ապահովման չափով գումար (1.000.000 ՀՀ դրամ):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝

«2. Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

3. Շրջանակային համաձայնագրերի կնքման դեպքում հայտի ապահովման չափը հավասար է գնումների բազային միավորին»:

Գտնում ենք, որ Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության որևէ խախտում թույլ չի տրվել վերը նշված հիմնավորումներով, ուստի Ընկերությունը չի կրում տուժանք վճարելու պարտավորություն:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է ՀՀ պաշտպանության նախարարության «ԳԱԿ-ՇՀԾԶԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾԶԲ-7/13»

ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի 04.11.2015թ. N 5 արձանագրային որոշումն ճանաչել ոչ իրավաչափ և վերացնել:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.06.2016թ. թիվ ԴՎԱ/1522 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի ծառայության գնման շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ են ներկայացրել 9 կազմակերպություն, որոնցից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն:

Ընկերությանը սահմանված կարգով առաջարկվել է ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որոնք սակայն մասնակցի կողմից ներկայացվել են թերի: Մասնավորապես՝ հրավերով պահանջվել է 2 հատ չորացնող սարք, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 1 հատ, բացի այդ, որպես արտադրամասի առկայության հավաստում, ներկայացվել է տարածքի վարձակալության պայմանագիր, որը նոտարական վավերացում չունի, իսկ տարածքի վարձակալության կամ սեփականության վկայականը ընդհանրապես բացակայում է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և մասնակցին ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված որակավորման փաստաթղթերը, որոնք սակայն թերի էին: Մասնավորապես՝ ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության վկայական 94.1 մ² մակերեսով, սակայն հրավերով պահանջվում էր 100 մ² -ից ոչ պակաս: Բացի այդ, ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ կնքված 30.10.2015թ., մինչդեռ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է 14.10.2016թ., որի թիվ 3.2 հավելվածով ներկայացրել է հայտարարություն, որ կազմակերպությունը ունի հրավերով նախատեսված տեխնիկական

միջոցները և պարտավորվում է 1-ին տեղ զբաղեցնելու դեպքում ներկայացնել փաստաթղթերը, որոնց հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի հայտը:

Միաժամանակ Պատվիրատուն նշված գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի արդյունքներով 24.12.2016թ. կնքվել են գնման պայմանագրեր, իսկ 29.01.2016թ. նաև համաձայնագրեր, որոնց հիման վրա լվացքի ծառայությունները առ այսօր մատուցվում են:

Պատվիրատուն Կենտրոնին ուղղված 07.06.2016թ. թիվ ԴՎԱ/1522 գրությամբ նշել է նաև, որ Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ Ֆինանսների նախարարությանն ուղղված 07.12.2015թ. թիվ ԴՎԱ/2928 գրությամբ:

3. ԳԲԽ-61/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 03.06.2016թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 20.05.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-61/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-61/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով **14.10.2015թ.** հայտ է ներկայացրել:

3. Ընկերությունը հայտի N 3.2 հավելվածով՝ տեխնիկական միջոցների հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **Ընկերությունն ունի կնքվելիք պայմանագրի կարարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պարշաճ կատարումը:**

4. Ընկերությունը հայտի N 3.2 հավելվածով պարտավորվել է Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ **Մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:**

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.10.2015թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ: **Մասնավորապես հրավերով պահանջվում էր 2 հար չորացնող սարք, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 1 հար, բացի այդ որպես արտադրամասի առկայության հավաստում ներկայացվել է տարածքի վարձակալության պայմանագիր, որը նույնպես վավերացում չունի, իսկ տարածքի վարձակալության կամ սեփականության վկայականը ընդհանրապես բացակայում է:**

Ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.11.2015թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով մերժել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի հայտը հետևյալ հիմնավորմամբ. **««Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է չորկված որակավորման փաստաթղթերը, որը սակայն թերի էր: Մասնավորապես՝ ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության վկայական 94.1 մ² մակերեսով,**

սակայն հրավերով պահանջվում էր ոչ պակաս 100 մ²: Բացի այդ, ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ կնքված 2015թ. հոկտեմբերի 30-ին, մինչդեռ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հոկտեմբերի 14-ին, որի Հավելված 3.2-ով ներկայացրել է հայտարարություն, որ կազմակերպությունը ունի հրավերով նախատեսված տեխնիկական միջոցները և պարտավորվում է 1-ին տեղ զբաղեցնելու դեպքում ներկայացնել փաստաթղթերը, որոնց հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի հայտը:»:

8. «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից, որպես տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ Մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթուղթ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է ՀՀ քաղաքացի Անդրանիկ Համբարյանի, Կարինե Իսկոյանի և «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի միջև 30.10.2015թ. նոտարական վավերացում ստացած անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ առանց նշված պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման վկայականի:

9. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.12.2015թ. թիվ ԴՎԱ/2928 գրության հիման վրա, 22.12.2015թ. թիվ 1/73-1/41370-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին խնդրելով ուսումնասիրել «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

10. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.03.2016թ. թիվ 01/04.1/759-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2015թ. թիվ 1/73-1/41370-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

11. ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 03.03.2016թ. թիվ 1/73-1/8168-16 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. ռիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ անհրաժեշտ է նշված գնման գործընթացի մասով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

12. «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 28.04.2016թ. կնքվել է լվացքի և մաքրման ծառայությունների գնման «ՇՀԾՁԲ-15/21-31» ծածկագրով շրջանակային համաձայնագիրը, որի 1.4 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է Կենտրոնի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում, համապատասխան ծանուցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում վերջինս Կենտրոնի համապատասխան հաշվեհամարին վճարել հայտի ապահովման չափով գումար:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 20.05.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.06.2016թ. թիվ ԴՎԱ/1522 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և **այլ գույքային իրավունքները**, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, **օգտագործման իրավունքը**, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

Օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առոչինչ է:**

Օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն պայմանագիրը, **որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:**

Օրենսգրքի 611-րդ հոդվածը սահմանում է, որ **անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող տեխնիկական միջոցներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու ռավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 66-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Այսպիսով, Օրենսգրքի 611-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Միևնույն ժամանակ Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ **գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չափապանելը հանգեցնում է դրա անվավերության և նման գործարքն առոչինչ է**, իսկ Օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ այն պայմանագիրը, **որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:**

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է վարձակալության պայմանագիրը կնքված և դրանից ծագող վարձակալության իրավունքը ծագած համարելու հետևալ երեք պայմանները.

1) վարձակալության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր.

2) վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման.

3) վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Օրենսգիրքը սահմանում է երեք պարտադիր պայման՝ վարձակալության պայմանագրի կնքման ձևը պահպանված համարելու համար:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը արձանագրում է, որ Ընկերության կողմից Պայմանագիրը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության կողմից պահպանվել են վարձակալության պայմանագրի կնքման ձևի առաջին երկու պայմանները, սակայն չի պահպանվել երրորդ՝ պետական գրանցման ենթարկելու պայմանը:

Մինչդեռ վերը նշված հոդվածները ուղղակիորեն սահմանում են, որ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը համարվում է կնքված՝ նշված պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման ենթարկելու պահից: Այսինքն Կողմերի միջև ստորագրված և նոտարական վավերացում ստացած անշարժ գույքի վարձակալության պայմանագրի հիման վրա վարձակալության իրավունքը ծագում է, երբ այն ենթարկվում է պետական գրանցման: Ավելին, ըստ վկայակոչված հոդվածների, իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության և նման գործարքն առոչինչ է:

Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացվել է գրավոր ձևակերպված և 30.10.2016թ. նոտարական վավերացում ստացած անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքները դեռևս ենթարկված չէին պետական գրանցման:

Հետևաբար, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ և 611-րդ հոդվածներով սահմանված դրույթների՝ Ընկերության կողմից ներկայացված Պայմանագիրը, ըստ էության, չի կարող համարվել կնքված, քանի որ չի պահպանվել Օրենսգրքով սահմանված վարձակալության պայմանագրի կնքման ձևը:

Ընկերությունը իր բողոքի մեջ ձևակերպել է հետևյալ միտքը. **«գույքային իրավունքների՝ ներառյալ սեփականության իրավունքի, պետական գրանցման բացակայությունը, չի կարող խոչընդոտ հանդիսանալ անձի մոտ սեփականության իրավունքի առկայությունն**

արձանագրելու համար, եթե կողմը ձեռք է բերել այնպիսի գույքային պահանջ, որի իրականացումն իրավաբանորեն հնարավոր է»:

Հարկ ենք համարում ընդգծել Ընկերության կողմից նշված հետևյալ արտահայտությունը՝ **«այնպիսի գույքային պահանջ, որի իրականացումն իրավաբանորեն հնարավոր է»:**

Խորհուրդը անհրաժեշտ է համարում նշել, որ տվյալ դեպքում խոսքը գնում է այնպիսի գույքային պահանջի մասին, որի իրականացումը իրավաբանորեն հնարավոր է, **բայց ոչ պարտադիր, հետևաբար Պատվիրատուն չէր կարող որևէ երաշխիք ունենալ, որ Ընկերությունը կպահանջի Վարձատուից պետական գրանցման ենթարկել վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները:**

Ուստի տվյալ դեպքում Պատվիրատուն չէր կարող կանխատեսել, թե Ընկերությունը արդյոք կպահանջի Վարձատուից ապահովելու Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումը, ինչպես նաև արդյոք Վարձատուն կիրականացնի Ընկերության պահանջը:

Հետևաբար Ընկերության այն պնդումը, համաձայն որի անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման բացակայությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ անձի մոտ սեփականության իրավունքի առկայությունը արձանագրելու համար, պետք է համարել չհիմնավորված, որովհետև Օրենսգիրքը հստակ սահմանում է անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ձևը, որը չպահպանելու դեպքում այն չի կարող համարվել կնքված:

Միևնույն ժամանակ Խորհուրդն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ համաձայն Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության՝ **սեփականության իրավունքը** սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ **իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:**

Հետևաբար, վարձակալության իրավունքը չի կարող նույնացվել սեփականության իրավունքի հետ, քանի որ վարձակալության իրավունքը իր մեջ ներառում է միայն ուրիշին պատկանող գույքի ժամանակավոր տիրապետումը և օգտագործումը, մինչդեռ սեփականության իրավունքը իր մեջ ներառում է անձի կողմից իրեն պատկանող գույքի և տիրապետումը, և օգտագործումը, և տնօրինումը:

Այսպիսով, թե Օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասը և թե 611-րդ հոդվածը, ուղղակիորեն սահմանում են, որ այն գործարքը, տվյալ դեպքում վարձակալության պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, համարվում է կնքված այդ իրավունքի պետական գրանցման պահից: Հետևաբար, վարձակալության պայմանագիրը համարվում է չկնքված, քանի դեռ դրանից ծագող իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման: Հետևաբար Ընկերության կողմից իր հայտի թիվ 3.2 հավելվածով ներկայացրած հայտարարության հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրած Պայմանագիրը օրենքի ուժով համարվում է չկնքված, ուստի չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանքներ, քանի դեռ այն չի ենթարկվել պետական գրանցման:

Մինչույն ժամանակ Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից որպես որակավորման պահանջները հիմնավորող փաստաթուղթ ներկայացված Պայմանագիրը չի կարող համարվել հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթուղթ, քանի որ Ընթացակարգի հրավերով պահանջվում էր, որ մասնակիցը ներկայացնի ***տեխնիկական միջոցի նկարմամբ իր սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները, սակայն տեխնիկական միջոցնի նկարմամբ Ընկերության ժամանակավոր օգտագործման իրավունքը օրենքով սահմանված կարգով, Պայմանագիրը ներկայացնելու օրվա դրությամբ ենթարկված չի եղել պետական գրանցման:***

Մինչդեռ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 2-րդ կետի 2.3 ենթակետի համաձայն տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ ***Մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:***

Պայմանագրի կատարման համար պահանջվող մի շարք տեխնիկական միջոցների հետ մեկտեղ հրավերով նախատեսվել է նաև ներկայացնել արտադրական նշանակության արտադրամաս /տարածքում նաև՝ պահասենյակներ՝ կահավորված դարակաշարերով, կեղտոտ և մաքուր սպիտակեղենի պահպանման համար/ 100 մ² ոչ պակաս մակերեսով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությանը սահմանված կարգով առաջարվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 14.10.2015թ. մասնակցության հայտի 3.2 հավելվածով՝ տեխնիկական միջոցների հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ *Ընկերությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պարզաճ կատարումը և նշված հավելվածով պարտավորվել է Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:*

Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից որպես հայտի թիվ 3.2 հավելվածով ներկայացված տեխնիկական միջոցների վերաբերյալ հայտարարությունը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացվել է **30.10.2015թ. նոյարական կարգով վավերացված անշարժ գույքի վարձակալության պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր)՝ առանց պետական գրանցման:**

Հետևաբար, Ընկերության կողմից հայտի թիվ 3.2 հավելվածով ներկայացված հայտարարությունը **չի կարող դիտվել որպես իրականությանը համապատասխանող**, չնայած այն հանգամանքին, որ Պայմանագրի 3.1.-րդ ենթակետով նախատեսվել է, որ այն տարածվում է նաև Կողմերի միջև 01.10.2015թ. ծագած հարաբերությունների վրա, այնուամենայնիվ, ինչպես վերը արդեն նշվել է, Ընկերության կողմից ներկայացված Պայմանագիրը օրենքի ուժով չի կարող համարվել որպես կնքված, ուստի խոսք չի կարող գնալ Պայմանագրի դրույթների իրավական ուժի մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 20.05.2016թ. բողոքն անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 20.05.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Կարապետյան Հայկ

Անդամներ՝



Գրիգորյան Էդվարդ



Գրիգորյան Գոռ